**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1/4.2-2-24**

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային
հանձնաժողովի հայտերի բացման նիստի

2024թ. հունիսի 24-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) (հայտերի բացման) նիստը:

**Նիստին մասնակցում էին՝**

| | | |
|---|---|---|
| Ս.Հակոբյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ |
| Ա.Մկրտչյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ |
| Ս.Ասլիզադյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ |
| Ա.Սողբաթյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար |
| Հ.Սահակյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական |
| Շ.Հովսեփյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար |

Քվորումն ապահովված է:

***Լսեցին՝***

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

***Որոշեցին՝***

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Ներկայացված հայտերի բացում armeps.am համակարգի միջոցով:
2. Հայտերի գնահատման ժամկետի սահմանում:
3. Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի հաստատում:

***Լսեցին՝***

Հանձնաժողովին ներկայացվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»**

միջոցառման շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

2. Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար մրցույթին ներկայացվել է 3 (երեք) հայտ՝

- «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,
- «Սիսիանի զարգացման նախաձեռնություններ» ՀԿ-ի,
- «Արեգակ Արդար» ՍՊԸ-ի կողմից:

***Լսեցին՝***

Հայտի գնահատման ժամկետի սահմանման մասին:

***Որոշեցին՝***

Հայտի գնահատման ժամկետ սահմանել մինչև 2024թ. հունիսի 27–ը, ժամը 12-$^{00}$-ն:

***Լսեցին՝***

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա և ժամի հաստատման մասին:

***Որոշեցին՝***

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստն անցկացնել 2024 թ. հունիսի 27-ին, ժամը 16-$^{00}$-ին:

Ս.Հակոբյան - _____
(հանձնաժողովի նախագահ)

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ա.Սողբաթյան - _____

Հ.Սահակյան - _____

Շ.Հովսեփյան - _____